Մեծամոր համայնքի սիրելի՛ բնակիչներ,

Շնորհավորում եմ բոլորիս Աշխատանքի օրվա առթիվ: Այս օրը նպատակներին և երազանքներին հասնելու ամփոփման, վերարժեվորման ու գնահատականի օրն է:

Աշխատանքը մեր սերունդներին արժանավոր ապագա կառուցելու անբեկանելի ճանապարհն է: Ճանապարհ, որը մեզ կբերի զարգացման հերթական հանգրվանին: Հաջողում են այն ազգերն ու պետությունները, որոնք չեն օգտվում միայն բնության բարիքներից, այլ զարգացնում են գիտությունը, տեխնոլոգիաները: Մենք՝ հայերս, աշխարհի ազգերի մեջ համարվում ենք աշխատասերներից մեկը, ովքեր իրենց քրտնաջան գործով ստանում են բերք ու բարիք և ստեղծում համընդհանուր արժեքներ: Եվ այսօր այն խորհրդանշական օրն է, երբ պետք է խորին խոնարհումը բերենք բարիք ստեղծող ու աշխատող մարդկանց: Շնորհակալ եմ կատարված և դեռ շարունակականության մեջ գտնվող աշխատանքի ու նվիրվածության համար:

Իմ սիրելի մեծամորցիներ մեկ անգամ ևս շնորհավորում եմ մայիսիմեկյան այս տոնը և մաղթում, որ ձեր աշխատանքը միշտ գնահատվի ու զոհունակություն բերի:

Մաղթում եմ բոլորիդ քաջառողջություն, ոգու արիություն և հաջողություններ ձեր բոլոր նախաձեռնություններում: